



*Համարը N 1378-Ն
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2017.11.15/67(1342)
Հոդ. 1117*

*Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 16.11.2017*

*Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան*

*Ընդունման ամսաթիվը 02.11.2017
Ստորագրման ամսաթիվը 03.11.2017
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը*

☒ Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի N 1209-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 նոյեմբերի 2017 թվականի N 1378-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի N 1209-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի նոյեմբերի 18-ի «Պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի Ադոնցի փողոցի N 6 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրից բնակարանների վաճառքի կարգը հաստատելու մասին» N 1209-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգում կատարել հետևյալ փոփոխությունները

1) 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Ծրագրի շրջանակներում տրամադրված հիփոթեքային վարկի սպասարկման ընթացքում պետական ծառայողի ցանկությամբ և «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության համաձայնությամբ համավարկառուն (համավարկառուները) կարող է (կարող են) փոխվել (կամ ավելանալ նոր համավարկառու), եթե շահառուն ցանկանում է բնակարանի ձեռքբերման նպատակով գնման ֆինանսավորման համար իր հետ վարկային պարտավորություններ ստանձնած անձին փոխարինել (կամ համալրել) մեկ այլ անձով».

2) 16-րդ կետի 10-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10) հիմնական պայմանագրի կնքման ժամկետը և դրա առարկայի հանձնումը՝ շինարարության ավարտից հետո մինչև 2019 թվականի հոկտեմբերի 30-ը, որպես կառուցապատողի անունով ինքնուրույն գույքային միավորներ, ստորաբաժանված և հասցեավորված մասնաշենքերի բնակարանների պետական գրանցման ավարտում, և մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը առավաճառքի հիմնական պայմանագրերի կնքում պետության նշած անձանց (շահառուների) հետ».

3) 16-րդ կետի 11-րդ ենթակետի «դ» պարբերությունում «կառուցապատողը պարտավոր է մինչև 2018 թվականի հունիսի 1-ը» բառերը փոխարինել «կառուցապատողը պարտավոր է մինչև 2018 թվականի նոյեմբերի 1-ը» բառերով.

4) 28-րդ կետի 8-րդ ենթակետում «մինչև 2019 թվականի հուլիսի 31-ը» բառերը փոխարինել «մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Կ. Կարապետյան

2017 թ. նոյեմբերի 3
Երևան